ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔ-1		
Հ/Հ	անվանումը/տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը
1	2	3	4
	1. ՋԵՐՄԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ		
1.1	Էլեկտրական արտադրական վառարան, 380 Վ, 6 սալիկ, առանց ջեռոցի - Չափսերը (ԵxԼxԲ): 1475x850x860 մմ ± 100մմ. Սալիկների քանակը - 6, սալիկնների չափսը 295x417 mm ± 10mm. Յուրաքանչյուր սալիկի հզորություն 3 kW. Սալիկները պատրաստված են չիղկված երկաթից, տաքացուցիչների քանակը յուրաքանչյուր սալիկում –առնվազն 2 , սալիկների աշխատանքային մակերեսի ջերմաստիճանը – 450-480˚C, ,Ջերմաստիճանի կառավարման և ջերմային պաշտպանության համակարգ.Կառավարման վահանակի վրա տեղադրված են 4 դիրքով անջատիչներ –6 հատ.Լարումը՝– 380 Վ.: Հզորությունը – մինչև 18 ԿՎ. Աշխատանքային մակերեսը և դիմային պանելը՝ չժանգոտվող մետաղից են: Արտաքին կողային պանելները ներկված պողպատից են:Ջեռոցի տակ պետք է լինի դարակ՝ հատակից 150մմ բարձրության վրա: Օգնող շրջանակը պետք է լինի քառաքուսի, կողային հատվածներում 15-20մմ: Ոտքերի տակդիրները պետք է սսարքավորված լինեն կարգավորվող ոտնակներով; Կարգավորման միջակայքը՝ 15-20մմ: Վոլտաժ 380 վ: Հզորություն մինչև 18 ԿՎ: Նմուշ նկարը կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	2
1.2	Էլեկտրական արտադրական վառարան, 380 Վ, 4 սալիկ, ջեռոցով - Չափսերը (ԵxԼxԲ):1050x850x860 (±100) mm. սալիկների քանակը -4, սալիկների չափսը 295x417 մմ ± 10մմ: Յուրաքանչյուր այրիչի հզորություն 3 kW. սալիկների նյութը – Չիղկված երկաթ, տաքացուցիչների քանակը յուրաքանչյուր սալիկում-առնվազն 2, սալիկների աշխատանքային մակերեսի ջերմաստիճանը - 450 - 480˚C C,Ջերմաստիճանի կառավարման և ջերմային պաշտպանության համակարգ: Կառավարման վահանակի վրա տեղադրված են 4-xx անջատիչներ: Երեսպատման թիթեղներ/ մակերեսը՝ չժանգոտվող պողպատից:Արտաքին կողային վահանակները պատրաստված են ներկված պողպատից: Վառարանի ներքևի հատվածում պետք է լինի ջեռոց՝ առանձին կառավարման վահանակով: Ջեռոցի ներսի չափսերը պետք է լինի 538x535x290 մմ, վերևի և ներքևի տաքացնող սպիրալներով և 4 թխելու սկուտեղների համար նախատեսված դարակներով: Ջեռոցի դուռը և շրջանակը պետք է լինի մետաղական: Ջեռոցի ջերմաստիճանի կարգավորման շրջանակը 20-270˚C: Ներքին խցիկի նյութը պետք է լինի չժանգոտվող մետաղից: Հավաքածուն պետք է պարունակի չժանգոտվող մետաղից 3 հատ թխելու սկուտեղ 530x470x30 մմ չափսերով կամ պետք է համապատասանի արտադրողի ստանդարտ չափերին:+320◦C և բարձր ջերմաստիճանների դեպքում պետք է ունենա գերտաքացումից պաշտպանվելու համար ջերմային անջատիչի առկայություն: Ներքևի և վերևի տաքացնող ջերմային էլեմենտի հզորությունը պետք է կարգավորվի առանձին: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	1
1.3	Շոգեկոնվեկցիոն վառարան 12 դարակներով՝ տակդիրով - Չափսերը (ԵxԼxԲ)817x780x1340 մմ (±50) մմ, տակդիրի վրա տեղադրվող: Գոլորշու առաջացման տեսակը՝ ինժեկտորային: Մեխանիկական կառավարման վահանակ: Արտաքին մակերեսները պատրաստված են չժանգոտվող պողպատից: Ջերմային խցիկը պատրաստված է բարձր ամրության չժանգոտվող պողպատից AISI 304:Արտադրական հզորությունը՝ 12 դարակ GN1/1 գաստրոնոմ տարաների և թխման համար նախատեսված 600x400մմ չափսի սինիների համար: Դարակների միջև հեռավորությունը՝ 67 մմ(±5) մմ Լարումը՝ 380 Վ. Հզորությունը՝ 16,1 կՎտ (±0.5)կՎտ: Ջերմաստիճանի կառավարման միջակայքը՝ +60-ից +260 °C: Առավելագույն բեռնվածությունը սկուտեղների վրա՝ ոչ ավել քան 4 կգ: Ռեվերսային էլեկտրաշարժիչների քանակը՝ 3 հատ: Ժամանակի (առավելագույնը 120 րոպե) և գոլորշու/խոնավության (0-ից 100%) կառավարումը մեխանիկական: Ինքնաշխատ ջրի և գոլորշու տրամադրման համակարգ, որը պահպանում է դրանց օպտիմալ մակարդակը: Ունի ավելորդ խոնավություն հեռացման համակարգը,որը ապահովում է օդի անհրաժեշտ խոնավություն	հատ	2

	ցանկացած կերակրատեսակ պատրաստելու համար: Աշխատանքային խցիկում օդի համաչափ բաշխումը ապահովում են ռեվերսային օդափոխիչները: Դուռը ունի կոփված ապակուց կրկնակի ապակեպատում: Շոգեկոնվեկցիոն վառարանը կիսաավտոմատ լվացման, ներքին ապակու հեշտ մաքրման համակարգ: Աշխատանքային ռեժիմը շարունակվում է մինչև ամբողջական անջատումը: Ջերմային խցիկն ունի հալոգեն լուսավորություն: Շոգեկոնվեկցիոն վառարանի հետ պետք է լինեն նաև 3 չափսի առանց բռնակների գաստրոնորմ տարաներ: Նյութը՝ բարձրորակ չժանգոտվող պողպատ CNS 18/10 (AISI 304) 0.8 մմ հաստությամբ: Գաստրոնոմ տարաների եզրերը պետք է ուժեղացված և կլորացված անկյուններով լինեն, տարողությունը հեշտ դատարկելու համար: գաստրոնոմ տարաները կարող են դասավորվել՝ 1) GN 1 / 1-65 - Չափերը (ԵxԼxԲ) 530x325x65 մմ, ծավալը 8 լ - 8 հատ. 2) GN 1 / 1-40 - Չափերը (ԵxԼxԲ) 530x325x40 մմ, ծավալը 5.1 լ - 8 հատ. 3) GN 1 / 1-20 - Չափերը (ԵxԼxԲ) 530x325x20 մմ, ծավալը 1.9 լ - 8 հատ. Գաստրոնոմ տարաների հետ պետք է լինեն բռնակներով 6 կափարիչ: Կափարիչները՝ բարձրորակ CNS 18/10 (AISI 304) 0.8 մմ հաստությամբ չժանգոտվող պողպատից : 1) Կափարիչը GN1/2-ի համար (530 x 325 մմ) - 6 հատ. Մետաղական տակդիր/սեղան AISI 304 չժանգոտող պողպատից – սեղանը նախատեսված է շոգեկոնվեկցիոն ջեռոցը դրանց վրա տեղադրելու համար: Այն ունի 10 դարակներ՝ GN 1/1 600*400 թավաներ (սկուտեղներ) տեղավորելու համար: Չափերը՝ (ԵxԼxԲ) 840x780x630մմ: Տակդիրը պատրաստված է 40x40մմ-ոց քառանկյուն խողովակից, պատի հաստությունը՝ առնվազն 1.2 մմ: Տակդիրի մետաղական մասերը AISI 304 չժանգոտող պողպատից: Ոտքերի բարձրությունը կառավարվում է, ռետինե ներդիրներով: Տակդիրի Նմուշ նկարը կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:		
1.4	Շարժասայլակ: Չափսերը (ԵxԼxԲ) 560x390x1575(±100) մմ, առանց անիվի: Կոնստրուկցիան եռակցված: Բաղկացած է երկու կանգնակներից՝ եռակցված ուղորդիչներով և չորս խաչաձողերով: Շարժասայլակը AISI 304 չժանգոտվող պողպատից: Կանգնակները՝ 25x25 մմ քառակուսի խողովակից 1,5 մմ պատի հաստությամբ: Ուղորդիչների ծայրերը ունեն թեքություն, որը կանխում է շարժասայլակի տեղափոխման ժամանակ գաստրոնորմ տարաների չնախատեսված շարժը: Ունի 100 մմ տրամագծով 4 պտտվող անիվներ, որոնցից 2-ն ունեն արգելակային մեխանիզմ: 530x325 մմ չափերով գաստրոնորմ տարաների համար նախատեսված ուղորդիչները ունեն 12 հարկի հնարավորություն, մակարդակների միջև հեռավորությունը՝ 113 մմ: Շարժասայլակի առվելագույն ծանրաբեռնվածությունը՝ 160 կգ: Մեկ հարկի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 15 կգ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ: Նմուշը /նկարը/ կցվում է:	հատ	2
1.5	Երկու սեկցիայով թխման էլեկտրական արտադրական ջեռոց: Չափսերը (ԵxԼxԲ): 840x900x1510 (±100) մմ. Հզորությունը՝ 9.5-10.5 ԿՎ, Լարումը՝~380 Վ, Ջեռոցում առավելագույն ջերմաստիճանը՝ 270°C ներառյալ, առավելագույն ջերմաստիճանին հասնելու ժամանակահատվածը՝ մինչև 30 րոպե: Վառարանը կազմված է մետաղական դռներով պողպատից արկղից: Յուրաքանչյուր խցիկում կան 2 բլոկ տաքացուցիչներից և 4 թխելու համար նախատեսված սինիների համար ուղորդիչներ: Պետք է տեղադրված լինի վթարային թերմոստատ, որը պաշտպանում է 320 °C-ից ավել տաքանալու դեպքում: Կառավարման վահանակը պետք է տեղադրված լինի վառարանի մեջ: Վառարանը պետք է ունենա հզորության վերահսկման առանձին ջեռուցիչներ վերևի և ներքևի դարակների համար: Վառարանի ներքին չափսերը 538x535x290 մմ. Տարողությունը՝ առնվազն 3 թխման սինիներ 530x470x30 մմ չափսերով: Վառարանը տեղադրված է ներկված տակդիրի վրա: Նմուշ նկարը կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	2
1.6	Ջրատաքացուցիչ: Ընդհանուր չափերը (ԵxԼxԲ) 365x378x1003 մմ (±50) մմ: Լարումը 220 Վ, տաքացման ժամանակը 2 ժամ 30 րոպե, ձևը՝ կլոր, ներքին բաք՝ պողպատ: Ներքին բաքի ծածկույթը բիոապակյա-ճենապակյա է, տաք ջրի ծավալը՝ 70 լիտր,	հատ	1

	հզորությունը՝ 1,5 կՎտ, դիրքը՝ ուղղահայաց: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:		
1.7	Ջրատաքացուցիչ (բոյլեր) - Ընդհանուր չափերը (տրամագիծը և բարձրությունը) 306x605 (±10) մմ:Ջրատաքացուցիչի ծավալը՝ 30լ, աշխատանքային ծավալը՝ առնվազն 20լ, ջերմաստիճանը 30-100 °C, ներկառուցված ջերմակառավարիչ: Ձեռքով լիցքավորվող, ջրի մակարդակի ցուցիչ, թերմոստատ: Նյութը՝ չժանգոտվող պողպատ, հզորությունը մինչև 3 կՎտ, լարումը 220 Վ. Ջուրը եռացնելու ժամանակը 60 րոպե: Նմուշ նկարը կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	2
	2. ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ		
2.1	Սննդի մեկ դռնանի արտադրական սառնարան 500-700լ - Աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը 0...+6 աստիճան: Ներքին ծավալը նվազագույնը 500 լ: Ագրեգատի դիրքը վերևից: Էլեկտրական հալեցում: Էլեկտրոնային կառավարման համակարգ, հզորությունը 0,35 կՎտ, 4 դարակով: Դարակների թույլատրելի ծանրաբեռնվածությունը 40 կգ: Սառնարանի պատի հաստությունը 50(± 10) մմ: Նմուշ նկարը կցվում է:Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	2
2.2	Սառցարան 200լ - Ներքին տարողությունը՝ առնվազն - 180 լիտր, օգտակար հզորությունը - 163 լիտր. Խցիկի ջերմաստիճանը 2-ից-18°C, էլեկտրաէներգիայի օրական սպառումը, երբ սենյակի ջերմաստիճանը 24°C է 1 ԿՎ, հզորությունը՝ 135 Վտ, կա մեկ մետաղական զամբյուղ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	2
	3. ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ		
3.1	Խմորի պարուրաձև հարիչ/12 կգ խմորի տարողությամբ/ - Չափսերը (ԵxԼxԲ) 385x670x720 (±100) մմ. Հարիչի տիպը - պարուրաձև: Տարրայի ծավալը18(±2)լ, Խմորի տարողությունը 12 կգ, Լարումը՝220Վ, հզորությունը 0.75 կՎտ: Արագությունների քանակը 1: Տարային պտտման արագությունը 10.5 պտույտ 1 րոպեում, պարույրի պտտման արագությունը 91 պտույտ 1 րոպեում. Տարան պահող հարմարանքը և S-աձև խմորի հունցիչը ամբողջությամբ պատրաստված են սննդի համար նախատեսված չժանգոտվող պողպատից:Կողային հատվածները պատրաստված են ներկված պողպատից: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	2
3.2	Բանջարեղեն կտրատող սարք - Մեքենան նախատեսված է հում, եփված բանջարեղեն կտրատելու և խաշված բանջարեղեն տրորելու համար:Փուլերը `3 . Էլեկտրական հզորությունը՝ 1 ԿՎ. Արտադրողականությունը (կգ/ժ): 350 կգ/ժ, Վոլտաժը: 380 Վ. Հավաքածուն ներառում է 7 տեսակ փոփոխվող սկավառակ: (1- խորանարդիկներ,2- օղակաձև 2մմ, 3 օղակաձև 4մմ, 4- քերիչ 1 , 5- քերիչ 2, 6-ձողիկներ, 7-տրորիչ 4մմ): Նմուշ նկարը կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:	հատ	2
3.3	Սպասքի լվացման սարք - Չափսերը (ԵxԼxԲ): 600x580x830 մմ: Սպասքի լվացման սարք արտադրական, դիմացից բեռնման հնարավորությամբ: Նախատեսված է հանրային սննդի և առևտրի օբյեկտներում սպասք, խոհանոցային պարագաներ, բաժակներ և դանակներ լվանալու համար:Սարքը պետք է հագեցած լինի էլեկտրամեխանիկական հսկողությամբ: Իրանը պատրաստված AISI 304 չժանգոտվող պողպատից:Արտադրողականությունը 30 ցանց/ժ կամ 540 ափսե/ժամ:Լվացման ցիկլը 60 / 90 / 120 / 180 վրկ հնարավորությամբ: Ցանցի չափսը՝ 500x500 մմ, Լարումը 380/220 Վ, Հզորությունը 5,1 կՎտ, Տաք ջրի միացման	հատ	1

	հանրավորությամբ,պոմպը դրենաժային, Ողողման և ցայման միջոցի դիսպենսեր: Զանգվածը՝ առնվազն 60 կգ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:		
	4. ՉԵԶՈՔ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ		
4.1	Աշխատանքային սեղան- 1200x600: Չափսերը (ԵxԼxԲ) 1200x600x850մմ, կողային առավելագույն բարձրությունը 50mm: Ներքևի հատվածում կա ամուր դարակ չժանգոտվող պողպատից, շրջանակը պատրաստված է քառակուսի չժանգոտվող պողպատի խողովակից 40x40մմ: Սեղանի աշխատանքային հատվածը պատրաստված է չժանգոտվող AISI 304 պողպատից: Հաստությունը՝ առնվազն 0.8 մմ՝ կրկանկի ամրացված լամինացված փայտի կտորտանքից պատրաստված հարթակով: Նմուշ նկարը կցվում է:	հատ	40
4.2	Չժանգոտվող պողպատից դարակ 1200*600 - Չափսերը (ԵxԼxԲ): 1200x600x1600մմ, շրջանակը պատրաստված է չժանգոտող քառանկյուն պողպատից չժանգոտվող պողպատից 40x40 մմ, 4 դարակները ամբողջությամբ պատրաստված են սննդի համար նախատեսված AISI 304 չժանգոտվող մետաղից, հաստությունը առնվազն 0.8մմ: Դարակները ամրեցված են հավելյալ ամրացուցիչով և հնարավորություն ունեն մինչև 200 կգ ծանրություն տանելու: Բոլոր 4 դարակները բեռնելու դեպքում առավելագույն թույլատրելի ծանրությունը 400 կգ:	հատ	12
4.3	Լվացարան-ավազան երկտեղանոց 600 - Չափսերը (ԵxԼxԲ) 1100x600x850 մմ; AISI 304 չժանգոտվող պողպատ, շրջանակը պատրաստված է քառակուսի չժանգոտվող պողպատի խողովակից 40x40մմ: Ավազանները եռակցված, եռակցման կարերը մշակված (2 հատ)՝ չափսերը 430x430x300 մմ (±50) մմ, ամբողջական սիֆոնով: Նմուշ նկարը կցվում է:	հատ	2
4.4	Լվացարան-ավազան մեկ տեղանոց կաթսաների համար - Չափսերը (ԵxԼxԲ) 1000x600x850 մմ; AISI 304 չժանգոտվող պողպատ, շրջանակը պատրաստված է քառակուսի չժանգոտվող պողպատի խողովակից 40x40մմ: Ավազանները եռակցված, եռակցման կարերը մշակված (1 հատ)՝ չափսերը 800x400x400 մմ, ամբողջական սիֆոնով:	հատ	1
4.5	Կերամիկական ձեռքերի լվացարան - Չափսերը (ԵxԼxԲ) 500x500x800 մմ (± 10)%:Նյութը՝ կերամիկա, ծորակով, սիֆոնով:	հատ	2
4.6	Անվասայլակներ: Մատուցման սայլակ 2 հարկ AISI 304 չժանգոտվող պողպատից, հաստությունը՝ առնվազն 0.8 մմ, անիվներով:	հատ	2
4.7	Խառնիչային ծորակ 400 - Չափսերը (ԵxԼxԲ) 400x15x1100 մմ, չժանգոտող պողպատից, ծորակը լատուն միջնամասից պատին ամրացվող: Լվացարանին ամրացվող մասի տրամագիծը 30մմ: Ճնշումային դուշ-ծորակը պտտվում է 360 աստիճան, ճկվող է, միանում է տաք և սառը ջրին, նախատեսված է մինչև 30-50 բար ճնշման օգտագործման համար: Խողովակը ջերմակայուն է 100 ° C:Նմուշ նկարը կցվում է:	հատ	3
4.8	Չորանոց - Չորացուցիչ ափսեների չորացնելու համար 5 դարակ: Չորացուցիչը պատրաստված է չժանգոտող պողպատից 20x30 մմ քառանկյուն խողովակից: 5 ամուր դարակները ամբողջությամբ պատրաստված են սննդի համար նախատեսված չժանգոտվող մետաղից և ամրեցված են կարծրացուցիչով, հնարավորություն ունեն 1 դարակի վրա տեղադրել մինչև 32 ափսե: Յուրաքանչյուր դարակը պետք է ունենա ջիր հեռացման իր սկուտեղը: Չափերը համաձայնեցնել գնորդի հետ ըստ տեղադրվածության:	հատ	2
	5. ԿՇԵՌՔԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ		
5.1	Կշեռք սեղանի չափաբաժնային - Չափսերը (ԵxԼxԲ): 258x285x135 մմ(± 10)%: Կշռելու համար թույլատրելի առավելագույն քաշը՝ 5 կգ, կշռեու հարթակի չափսերը՝(ԵxԼ) 240x192մմ(± 10)%, ունի LCD էկրան: Էլեկտրամատակարարումը ցանցից 110 ÷240 V/1 ֆազ ՝ ադապտերի կամ մարտկոցի միջոցով: Արտաքինից թաղանթով պետք է պաշտպանված լինի փոշուց և խոնավությունից: Նմուշ նկարը կցվում է:	հատ	2
	6. ՕԴԱՔԱՐՇ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ		
6.1	Օդաքարշ պատին ամրացող 1200x1000x350 մմ (ԵxԼxԲ) : Պատի ամրացվող հովանոց՝ ճարպակլանող լաբիրինթոսային զտիչներով, նյութը՝ AISI 430 չժանգոտվող պողպատ, թիթեղի նվազագույն հաստությունը՝ 1 մմ, ֆիլտրի նյութը՝ AISI 430 չժանգոտվող պողպատ, թիթեղի նվազագույն հաստությունը՝ 0.6 մմ: Հովանոցը ամրանում է պատին, օդափոխության համակարգին միանում է մեկ 250մմ տրամագծով ներդիրով:Թողունակությունը՝ 691-1036 խմ/ժ:	հատ	2
6.2	Օդաքարշ պատին ամրացող 1400x1000x350 մմ (ԵxԼxԲ): Պատի ամրացվող հովանոց՝ ճարպակլանող լաբիրինթոսային զտիչներով, նյութը՝ AISI 430 չժանգոտվող պողպատ, թիթեղի նվազագույն հաստությունը՝ 1 մմ, ֆիլտրի նյութը՝ AISI 430	հատ	3

	չժանգոտվող պողպատ, թիթեղի նվազագույն հաստությունը՝ 0.6 մմ: Հովանոցը ամրանում է պատին, օդափոխության համակարգին միանում է մեկ 250մմ տրամագծով ներդիրով:Թողունակությունը՝ 806-1209 խմ/ժ.		
	7. ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ		
7.1	Գդալներ - Ճաշի գդալ, սննդային չժանգոտվող պողպատից, երկարությունը ոչ պակաս 200մմ, հաստությունը 2 մմ, աշխատող մասի խորությունը 0.5մմ, եզրերը հարթեցված, փայեցված, ԳՕՍՏ 25185-93 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Ապրանքի վրա մակնշված (ոչ սասնձային տարբերակով) լինի օգտագործված նյութը:	հատ	72
7.2	Պատառաքաղեր - Պատառաքաղ սեղանի, ատամիկները 4 հատ, երկարությունը՝ ոչ պակաս 200մմ, հաստությունը 2մմ, սննդային չժանգոտվող պողպատից, ԳՕՍՏ 25185-93 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Ապրանքի վրա մակնշված (ոչ սասնձային տարբերակով) լինի օգտագործված նյութը:	հատ	72
7.3	Ափսեներ - Ափսե հախճապակուց: 25-27սմ տրամագծով, խորությունը 6մմ, եզրը ոչ ավել 3սմ: Գույնը՝ սպիտակ կամ կաթնագույն, միագույն, առանց նախշերի, ԳՕՍՏ 25185-93-ի չափորոշիչներին համապատասխան: Ապրանքը պետք է ունենա արտադրողի մակնշում:	հատ	72
7.4	Ափսեներ ապուրի - Ապուրի ափսե 300-400մլ ոչ ավել, հախճապակե, գույնը՝ սպիտակ կամ կաթնագույն, միագույն, առանց նախշերի, ԳՕՍՏ 25185-93-ի չափորոշիչներին համապատասխան: Ապրանքը պետք է ունենա արտադրողի մակնշում:	հատ	48
7.5	Բաժակներ - Բաժակ՝ պոչով, հախճապակե, տարողությունը 250մլ, կոթի երկարությունը առնվազն 60մմ, ԳՕՍՏ 25185-93-ի չափորոշիչներին համապատասխան: Գույնը՝ սպիտակ կամ կաթնագույն, միագույն, առանց նախշերի: Ապրանքը պետք է ունենա արտադրողի մակնշում:	հատ	72
7.6	Կոթավոր կաթսա (սոտեյնիկ), 2 լիտր տարողությամբ - սննդային չժանգոտվող պողպատից, եռաշերտ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Տարողությունը ոչ պակաս 2 լիտրից, տրամագիծը ոչ պակաս 190 մմ: Մետաղի հաստությունը առնվազն 1,2մմ:	հատ	6
7.7	Կաթսա կափարիչով 4 լիտր տարողությամբ - սննդային չժանգոտվող պողպատից, եռաշերտ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Տարողությունը ոչ պակաս 4լիտրից, տրամագիծը Փ220 մմ:Մետաղի հաստությունը առնվազն 1,2մմ երկու բռնակով: Կափարիչը նույնպես բռնակով:	հատ	2
7.8	Կաթսա կափարիչով 10 լիտր տարողությամբ: Պատրաստված լինի սննդային չժանգոտվող պողպատից, եռաշերտ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Տարողությունը ոչ պակաս 10լիտրից, տրամագիծը Փ 260 մմ: Մետաղի հաստությունը առնվազն 1,2մմ, երկու բռնակով: Բռնակները գամերով ամրացված լինելու դեպքում ամեն կողմից առնվազն 4 գամ: Կափարիչը նույնպես բռնակով:	հատ	2
7.9	Կաթսա կափարիչով 20 լիտր տարողությամբ: Պատրաստված լինի սննդային չժանգոտվող պողպատից, եռաշերտ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Տարողությունը ոչ պակաս 20լ, տրամագիծը Փ340 մմ: Մետաղի հաստությունը առնվազն 1,2մմ, երկու բռնակով: Բռնակները գամերով ամրացված լինելու դեպքում ամեն կողմից առնվազն 4 գամ: Կափարիչը նույնպես բռնակով:	հատ	2
7.10	Կաթսա կափարիչով 40 լիտր տարողությամբ: Պատրաստված լինի սննդային չժանգոտվող պողպատից, եռաշերտ: ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Տարողությունը ոչ պակաս 40 լիտրից, տրամագիծը Փ 400 մմ: Մետաղի հաստությունը առնվազն 1,2մմ, երկու բռնակով: Բռնակները գամերով ամրացված լինելու դեպքում ամեն կողմից առնվազն 4 գամ: Կափարիչը նույնպես բռնակով:	հատ	2
7.11	Սննդի տարաներ GN 1/1 - Գաստրոնոմ տարաներ, սննդային չժանգոտվող պողպատից, 530x325x60մմ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: GN 1/1:	հատ	4
7.12	Թասեր 5լ - սննդային չժանգոտվող պողպատից՝ առնվազն AISI -304, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան:	հատ	4

7.13	Քամիչներ (փլավքամիչներ) - սննդային չժանգոտվող պողպատից, երկկողմանի բռնակ, տրամագիծը՝ 36սմ, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան:	հատ	4
7.14	Քամիչ-Մաղ - մետաղական, երկար կոթով, մանր հյուսվածքով, իրանը սննդային չժանգոտվող պողպատից՝ առնվազն AISI -304, ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան:	հատ	4
7.15	Հարիչ ձեռքի - հարելու համար նախատեսված հատվածը 10-15սմ, մետաղական, սննդային չժանգոտվող պողպատից՝ առնվազն AISI -304, բռնակը ամբողջական:ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան:	հատ	10
7.16	Շերեփ - 250մլ, սննդային չժանգոտվող պողպատից՝ առնվազն AISI -304, բռնակը ամբողջական: ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան:	հատ	4
7.17	Խավարտի գդալ - Խավարտի գդալ, 150-200մլ, պոչի երկարությունը՝ 30-35սմ, սննդային չժանգոտվող պողպատից, բռնակը ամբողջական:ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան:	հատ	4
7.18	Քափկիր - Քափկիր, տրամագիծը 10-12սմ, սննդային չժանգոտվող պողպատից՝ առնվազն AISI -304, բռնակը ամբողջական: ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան:	հատ	4
7.19	Խառնիչներ - Բահիկներ մետաղյա, անցքերով, սննդային չժանգոտվող պողպատից՝ առնվազն AISI -304, բռնակը ամբողջական: ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան:	հատ	4
7.20	Կարտոֆիլի ճզմիչ - Կարտոֆիլի ճզմիչ մետաղյա, անցքերով, սննդային չժանգոտվող պողպատից՝ առնվազն AISI -304, բռնակը ամբողջական: ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան:	հատ	4
7.21	Խոհանոցային դանակներ- Հավաքածու՝ 6 հատ՝ բաղկացած 6 տարբեր նշանակության խոհանոցային դանակներից - 1- մսի դանակ, ծայրը նեղ է, երբեմն՝ կորացված եզրով, 2- հացի դանակ, կտրող եզրը՝ թույլ արտահայտված ալիքով և կլորացված, 3- բանջարեղենի դանակ 4- մրգի դանակ 5-կաթնամթերքի դանակ, 6- էկոնոմ դանակ (քերիչ): Դանակների բռնակները ամբողջական: Դանակների սայրերը պատրաստվում են բարձրորակ, չժանգոտվող պողպատից: ԳՕՍՏ 27002-86 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Ապրանքի վրա մակնշված (ոչ սասնձային տարբերակով) լինի օգտագործված նյութը:	հատ	25
7.22	Խոհանոցային տախտակներ - Հավաքածուն բաղկացած է 5 հատ տարբեր գույների պոլիպրոպիլենային խոհանոցային տախտակներից, չափը 400x300մմ, հաստությունը առնվազն 15 մմ:	հատ	45
7.23	Չափիչ բաժակներ բաժնեչափով 1լ - Չափման բաժակ 1լ, պլաստիկ:	հատ	4
7.24	Չափիչ բաժակներ բաժնեչափով 0.5լ - Չափման բաժակ 0,5 լ, պլաստիկ:	հատ	4
7.25	Ջերմաչափեր ճաշի - Ճաշի թվային ջերմաչափ, սննդային չժանգոտվող պողպատի զոնդով՝ առնվազն AISI -304: Զոնդի երկարությունը՝ 200-300 մմ: Աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը առնվազն՝ 0 °C-50 °C:	հատ	2
7.26	Ջերմաչափեր սենյակի - Սենյակի թվային ջերմաչափ, ջերմաստիճան ցույց տալու միջակայքը առնվազն -10 °C + 50 ° C: Պլաստիկ, փայտե կամ ապակյա խցիկով:	հատ	2
7.27	Վաֆլի պատրաստող սարք - հզորություն (Վտ) - առնվազն 800 Վտ, ծածկույթը՝ չկպչող, հոսանքի (Վ/Հց) - 220-240Վ/50-60 Հց, ներդիրների քանակը՝ 2: Նմուշ նկարը կցվում է:	հատ	2
7.28	Մսաղաց էլեկտրական - Էլեկտրական հզորությունը՝ առնվազն 1,1 կՎտ: Արտադրողականությունը (կգ/ժ)՝ առնվազն 250 կգ/ժ: Լարումը՝ 220Վ: Հզոր և հուսալի շարժիչ: Հետ պտտման ռեժիմով: Կտրիչը՝ չժանգոտվող պողպատից - 2 հատ: Չժանգոտվող պողպատից ափսե (лоток): Չժանգոտվող պողպատից տարբեր տրամաչափի ցանցեր - 3 հատ: Մսաղացը ամբողջությամբ պատրաստված է 1.8 - 2.1 մմ հաստությամբ 18/10 AISI 304 մարկայի չժանգոտվող պողպատից:	հատ	1

	Մսի լաստիկ մղիչ: Ռետինե կարգավորվող ոտքեր: Պայմանագրի կատարման փուլում Վաճառողը պետք է ապրանքների համար ներկայացնի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ: Նմուշ նկարը կցվում է:		
7.29	Հարիչ - Ամանի պատրաստման նյութը՝ պողպատ, արագությունների քանակը /ներառյալ տուռբո ռեժիմ/՝ առնվազն 6, գլխիկների քանակ՝ 3, հզորությունը՝ առնվազն 1100 Վտ: Նմուշ նկարը կցվում է:	հատ	1
7.30	Ձեռքի բլենդեր - հզորություն՝ 450 Վտ՝ հանգիստ, կոմպակտ և արդյունավետ բաժակ, արագություններ՝ 1 ռեժիմ, մթերքի շաղափման բաժին (beaker)՝ 600 մլ, մանրահատիչ կցորդ (chopper)՝ 350 մլ, մասեր՝ լվացվող, հեշտ բացելու համակարգ՝ արագ կցորդների փոխարկում՝ պարզ պտույտով: Էլեկտրական մալուխի երկարություն՝ 1.0–1.2 մ: Նմուշ նկարը կցվում է:	հատ	2

Գ Ն Ո Ր Դ

(ստորագրություն)

Կ.Տ.

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)

Կ.Տ.

Ստորագրող

ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1205880502

2026-11-18 20:56:16 GMT+04:00

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից